ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 71-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման /ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին կարգի IV բաժին/,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 15.07.2020թ. N 66-Ա որոշումը,սեփականության իրավունքի N 27072020-06-0049 վկայականը հաշվի առնելով,որ քաղաքացիներ Արմեն,Արտաշ և Աշխեն Մամիկոնի Գալստյաններն ընդունել են մառանը և զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով գնելու գնման նախապատվության առաջարկությունը /դիմում՝ մուտք 29.07.2020թ. թիվ 189 / և վճարել են օրինականացման համար սահմանված վճարները՝

որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 6-րդ փողոց,թիվ 35 հասցեում գտնվող 34.5քմ արտաքին մակերեսով մառանը և դրա սպասարկման ու պահպանման համար 0,02986 հա մակերեսով հողամասը /ծածկագիր՝ 06-004-0020-0030/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան, 7-րդ փողոց, շենք 10,բն. 17 հասցեում բնակվող քաղաքացիներ Արմեն,Արտաշ և Աշխեն Մամիկոնի Գալստյաններին 52815.6 /հիսուներկու հազար ութ հարյուր տասնհինգ դրամ վաթսուն լումա/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով /տարածաշրջանային 16 գոտի, 0,035 և 0.0016 համապատասխանաբար գործակիցներ/ որից՝

ա/ մառանի վաճառքի գինը կազմում է 34.5x20000x0.035= 24150 /քսանչորս հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ,

բ/ հողամասի վաճառքի գինը կազմում է 0,02986x0.0016x60000= 28665.6 /քսանութ հազար վեց հարյուր վաթսունհինգ դրամ վաթսուն լումա/ ՀՀ դրամ:

2.Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվարկային հաշվին մուծել 24150 /քսանչորս հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ,

իսկ 900265123274 հաշվարկային հաշվին՝ 28665.6 /քսանութհազար վեց հարյուր

վաթսունհինգ դրամ վաթսուն լումա/ ՀՀ դրամ: Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
3. Մառանը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 72-Ա

ՎԱՍԻԼԻ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 70-րդ հոդվածի պահանջներով ,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ.հունիսի 12-ի թիվ 31-Ա որոշումը և հողամասի աճուրդ-վաճառքի արդյունքի մասին աճուրդային և մրցութային հանձնաժողովի 27.07.2020թ.թիվ 5 արձանագրությունը՝

որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0178-0005 ծածկագրի համայնքային սեփականություն հանդիսացող 0.209 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը 230000 (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ արժեքով վաճառել աճուրդի հաղթող Վասիլի Վարուժանի Ստեփանյանին և կնքել օտարման պայմանագիր:
2.Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Է.Պետրոսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**